

# ՓՈՐՐ ՔԱՅԼԵՐԻ ՄԵՍ ԱՐԴՅՈՒՆՔԸ

ՆՈՐ ԹԱՓ ԲՈ ԿՅԱՆՔԻՆ,  
ՓՈՂԻՆ ՈՒ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆԸ

Գիրքը նվիրում եմ

ին

հանուն քեզ ու քո սեփ հաջողության

**Darren Hardy**

# **THE COMPOUND EFFECT**

**JUMPSTART YOUR INCOME,  
YOUR LIFE, YOUR SUCCESS**

Դարեն Յարդի

# ՓՈՐՐ ԲԱՅԼԵՐԻ ՄԵՍ ԱՐԴՅՈՒՆՔԸ

ՆՈՐ ԹԱՓ ԲՈ ԿՅԱՆՔԻՆ,  
ՓՈՂԻՆ ՈՒ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆԸ

Թարգմանությունն անգլերենից՝  
Դավիթ Սարգսյանի



ԵՐԵՎԱՆ  
2025

ՀՏԴ 159.9  
ԳՄԴ 88  
Հ 392

Հարդի Դարեն

Հ 392 Փոքր քայլերի Մեծ արդյունքը: Նոր թափ քո կյանքին, փողին ու հաջողությանը / Դ. Հարդի.- եր.: Newmag, 2025.- 224 էջ:

Առանց խաբկանքի, առանց չափազանցումների, առանց հրաշագործ լուծումների՝ Դարեն Հարդին ներկայացնում է այն հիմնարար սկզբունքները, որոնք աշխարհի ամենանշանավոր ու հաջողակ մարդկանց առաջնորդել են կյանքի բոլոր ոլորտներում: Ինչպես են փոքր, բայց հետևողական գործողությունները ձևավորում մեծ արդյունք: Հարդին բացատրում է, որ հաջողությունը կախարդանք չէ, այլ սովորությունների, կարգապահության և ամենօրյա ճիշտ որոշումների հետևանք: Պարզ, կիրառելի և ոգեշնչող այս գիրքը կօգնի ստանձնել սեփական կյանքի ղեկը և քայլ առ քայլ ստեղծել ապագան, որին ձգտում ես: Ի վերջո, հաջողությունը փոքր քայլերի մեծ արդյունքն է:

ՀՏԴ 159.9  
ԳՄԴ 88

Գլխավոր գործընկեր՝

ՎԵԼԵՍ ԳՐՈՒՊ

weles.am

**WELES GROUP**  
SWISS VISION - GLOBAL IMPACT

ISBN 978-9939-482-09-5

Copyright © 2012 Vanguard Press

Դարեն Հարդի «Փոքր քայլերի Մեծ արդյունքը» © 2025, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

## Բովանդակություն

Թոնի Ռոբինսի հատուկ ուղերձը .....	11
Հրատարակման 10-րդ տարվա առթիվ .....	16
Ներածություն .....	21
Գլուխ 1 «Փոքր քայլերի Մեծ արդյունքը» մեր կյանքում ....	27
Գլուխ 2 Որոշումներ .....	49
Գլուխ 3 Սովորություններ .....	89
Գլուխ 4 Ոսկե պահը .....	139
Գլուխ 5 Ազդող գործոններ .....	169
Գլուխ 6 Արագացում .....	197
Եզրակացություն .....	217
Երախտագիտության խոսք .....	222

Գիրքը նվիրում եմ

Ջերի Հարդիին՝ հորս, որը «Փոքր քայլերի Մեծ արդյունքի» սկզբունքներն ինձ սովորեցրեց իր օրինակով:

Նաև Ջիմ Ռոնին՝ իմ մենթորին՝ մարդու, որը, ի թիվս այլնի, ինձ սովորեցրեց խոսել ոչ անտարբեր մարդկանց հուզող երևույթների մասին:

Անկախ նրանից, թե ինչ եք սովորում, ինչ ռազմավարություն  
կամ մարտավարություն եք կիրառում, հաջողությունը փոքր  
քայլերի մեծ արդյունքն է:

## Թոնի Ռոբինսոնի հատուկ ուղերձը

Կյանքիցդ գո՞հ ես: Թե՞ թերթում ես այս գիրքը, որովհետև ուզում ես վերափոխվել: Կարծում եմ՝ «Փոքր քայլերի Մեծ արդյունքը» հիմա ձեռքիդ է, որովհետև այս պահին քո կյանքում առնվազն մի բան չի բավարարում քեզ: Չես հավատա, բայց դա լավ է, նշանակում է, որ փնտրում ես պատասխաններ ու պատրաստ ես աճել:

Շատերը կարծում են, թե փոփոխությունն ու անձնական աճը դժվար գործընթացներ են: Բայց ես հավատում եմ, որ քո երազանքներն ու նպատակներն իրականացնելու համար պետք չէ իրար անցնել կամ չափից դուրս լարվել: Հաջողությունը պարզ է: Այս գիրքը՝ «Փոքր քայլերի Մեծ արդյունքը», հիմնված է իմ կյանքում ու դասընթացներում առանցքային մի սկզբունքի վրա. քո որոշումներն են ձևավորում քո ճակատագիրը: Ամենօրյա փոքր որոշումները քեզ կտանեն դեպի ցանկալի կյանք կամ դեպի ձախողում: Իրականում մեր կյանքը ձևավորում են հենց այդ փոքր որոշումները: Ինչ ուտելուց մինչև որտեղ աշխատելը, ում հետ ժամանակ անցկացնելուց մինչև օրը պլանավորելը՝ ամեն ընտրություն ազդում է առօրյայի, բայց որ ավելի կարևոր է, հետագա ամբողջ կյանքի վրա:

Կտեսնես, որ հաջողությունը հինգ հազար տարբեր գործեր լավ անելը չէ: Հաջողությունը ճիշտ գործեր անելն է հինգ

հազար անգամ: Դարեն Հարդին այս գրքում բացահայտում է հաջողության առանցքային սկզբունքները և հուշում, թե ինչպես դրանք դարձնել առօրյայի մաս. սա է երկարաժամկետ հաջողության բանաձևը:

Երբ որևէ մեկին խնդրում ես օգնել փոխակերպման քո ճանապարհին, մի՛ լսիր, թե նա ինչ է ասում հաջողության հասնելու մասին, նայի՛ր, թե նա ինչ է անում: Մարդիկ կարող են ասել մի բան, բայց նրանց իրական էությունը բացահայտվում է նրանց քայլերով: Այս առումով ևս Դարենն արժանի է բարձր գնահատականի, քանի որ նրա խոսքը գործից չի տարբերվում. այս գրքում նրա ներկայացրած մտքերի հիմքում հենց իր, նաև իմ կյանքի փորձն է:

Ե՛վ Դարենը, և՛ ես բավականին վաղ տարիքում որոշեցինք մեր ձեռքը վերցնել մեր կյանքի ղեկը: Սկսեցինք պատասխաններ փնտրել մարդկանց մոտ, որոնք ապրում էին այն կյանքով, որին մենք ձգտում էինք: Ու կիրառեցինք այն, ինչը սովորեցինք նրանցից: Զարմանալի չէ, որ երկուսս էլ Ջիմ Ռոնին համարում ենք մեր մենթորը: Ջիմը մարդկանց օգնելու իսկական վարպետ էր: Նա կարողանում էր անել այնպես, որ հասկանալի իրական հաջողության տանող ճշմարտություններն ու կանոնները: Նա մեզ սովորեցրեց, որ ձեռքբերում հասկացությունն իրական գիտություն է: Իհարկե, բոլոր մարդիկ տարբեր են, բայց հաջողության կանոնները կիրառելի են բոլորի դեպքում: Մարդը կյանքից ստանում է այն, ինչ տալիս է: Ուզո՞ւմ ես ավելի շատ սեր, տո՞ւր ավելի շատ սեր, ուզո՞ւմ ես ավելի մեծ հաջողություն, օգնի՛ր մյուսներին հասնել ավելի մեծ հաջողության: Եվ երբ ուսումնասիրես «ձեռքբերում» հասկացությունն ու կիրառես, հաստատ կհասնես այն հաջողությանը, որին ձգտում ես:

Դարեն Հարդին այս փիլիսոփայության իրական մարմնավորումն է: Նա ապրում է այն, ինչի մասին խոսում է: Այս գրքում կկարդաք հենց այն, ինչն աշխատել է իր, նաև իմ կյանքում: Հաջողության հասնելու համար Դարենը կիրառել է շատ պարզ, բայց միևնույն ժամանակ՝ շատ խորը հիմունքներ, և դրա շնորհիվ 24 տարեկանում արդեն մեկ միլիոն դոլարից շատ փող էր աշխատում, 27-ում էլ հիմնել էր 50 միլիոն+ արժեքով ընկերություն:

Դարենի կյանքը հաջողության անձնական լաբորատորիա է: Նա ինքն իրեն դարձրել է փորձանմուշ՝ փորձարկելով հազարավոր գաղափարներ, ռեսուրսներ և գործիքներ, ունեցել է և՛ հաջողություններ, և՛ տապալումներ, որոնց միջոցով էլ պարզել է, թե ո՞ր գաղափարներն ու ռազմավարություններն են աշխատում, որոնք՝ ոչ:

Դարենին գիտեմ 25 տարուց ավելի: Նա անձնական զարգացման ոլորտում աշխատել է հարյուրավոր հեղինակների, հրապարակախոսների ու մտածողների հետ: Վերապատրաստել է տասնյակ հազարավոր ձեռնարկատերերի, խորհրդատվություն է տրամադրել մեծ ընկերությունների և եղել է հազարավոր տնօրենների ու մեծ հաջողության հասած անհատների անձնական խորհրդատուն՝ նրանցից քաղելով այն, ինչն աշխատում է, և այն, ինչը չի աշխատում:

Դարենն այս ոլորտում առանցքային դեր է ունեցել որպես հեռուստատեսային պրոդյուսեր և SUCCESS ամսագրի հրատարակիչ: Նա հարցազրույցներ է վարել հաջողության հասած հռչակավոր մարդկանց հետ՝ Ռիչարդ Բրենսոնից մինչև գեներալ Քոլին Փաուել ու Սերենա Ուիլյամս, քննարկել հաջողության բազմազան ասպեկտներ: Նա խորությամբ վերլուծել

է նրանց (նաև՝ իմ) լավագույն գաղափարներն ու հավաքել դրանք: Դարենը հաջողության հասնելու գիտելիքը տարբեր աղբյուրներից հավաքողի, զտողի, վերլուծողի, ամփոփողի և դասակարգողի կենդանի հանրագիտարան է: Նա լռեցնում է աղմուկը և կենտրոնանում միայն կարևոր սկզբունքների վրա, որոնք կարող ես կիրառել քո կյանքում և հասնել չափելի ու կայուն արդյունքի:

«Փոքր քայլերի Մեծ արդյունքը» հենց քո ձեռնարկն է, որը սովորեցնում է, թե ինչպես քո ձեռքում պահես համակարգը, ինչպես վերահսկես, կառավարես և ուղղորդես այն՝ ուզածիդ հասնելու համար: Ու երբ դա անես, այլևս չի լինի ոչինչ, որին դու հասնել չես կարողանա:

Ինչպես նշեցի, իմ կյանքում և իմ դասընթացներում կիրառում են «Փոքր քայլերի Մեծ արդյունքի» առանցքային թեզը. քո որոշումներն են ձևավորում քո ճակատագիրը: Ապագան այն է, ինչը ստեղծում ես այսօր: Քո ընտրած ճանապարհը՝ նույնիսկ ամենափոքր, առօրյա որոշումները, քեզ կարող են տանել և՛ այնտեղ, ուր երազում ես հայտնվել, և՛ այնտեղ, ուր քեզ սպասում է միայն ափսոսանք: Կյանքիդ ուղղությունը վճռվում է հենց այդ փոքր որոշումներով: Նույնիսկ 2 միլիմետր շեղվելով՝ կշեղվես ամբողջ ճանապարհից: Այն, ինչը կթվա չնչին ու աննշան որոշում, հետագայում կարող է վերածվել հսկայական սխալի: Եվ դա վերաբերում է ամեն ինչին՝ սկսած նրանից, թե ինչ ես ուզում, որտեղ ես աշխատում, ում հետ ես անցկացնում ժամանակդ, ինչպես ես անցկացնում օրդ. քո յուրաքանչյուր որոշումը ձևավորում է քո այսօրն ու վաղը:

Լավ լուրն այն է, որ դու կարող ես փոխվել: 2-միլիմետրանոց սխալը կարող է քեզ ուրիշ տեղ տանել, նույն ձևով էլ փոքրիկ

շտկումը կարող է վերադարձնել ձիշտ հուն: Եվ խնդիրը ձիշտ ուղեցույց գտնելն է՝ քարտեզ, որը ցույց կտա, թե որն է վերջնակետը, ինչպես հասնել դրան և ինչ անել ճանապարհից չջեղվելու համար:

Կոչս հետևյալն է. ինքնահոսի մի՛ տրվեք: Ձեր կյանքը ձե՛ր ձեռքը վերցրեք և կայացրեք որոշումներ, որոնք կկանխորոշեն ձեր երազած ապագան: Եթե ուզում եք աճել (հույս ունեմ՝ ուզում եք), կիրառե՛ք այս գրքի պես գործիքներ: Օգտագործե՛ք որպես ուղեցույց՝ ստեղծելով ձեր ուզած կյանքն ու հասնելով ձեր ուզած հաջողությանը: Հիշե՛ք՝ հաջողությունը պարզ է: Ձիշտ քայլեր արեք և արեք դրանք ամեն օր ու կտեսնեք, թե ինչ հրաշալի հնարավորություններ եք ստեղծում ինքներդ ձեզ համար:

Այս գիրքը հենց այդ քայլերի մանրամասն, գործուն ճանապարհային քարտեզն է: Թող այն վերափոխի քո սպասումները, ցնցի քո պատկերացումները, բորբոքի քո հետաքրքրասիրությունը և այս պահից սկսած՝ նոր արժեք ավելացնի քո կյանքում: Կիրառի՛ր այս գործիքը: Օգտագործի՛ր որպես հաջողության ուղեցույց: Եվ եթե անես դա, եթե անես մյուս ձիշտ քայլերը ևս ու շարունակես նույն ոգով ամեն օր, կստեղծես լավագույնը քո կյանքում:

Հավեսո՛վ ապրիր:

**Թոնի Ռոբինս**

Ձեռնարկատեր, հեղինակ,  
մարդկային պոտենցիալի ռազմավարագետ

ամբողջական գիրքն այստեղ է՝

**Bookmark**